



ՕՐԱԳԻՐ ՉՄԻՒՌՆԻՈՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԲԵՍԵՐՈՐԻ ԻՆՆԵՐՈՐԴՏԱՐԻ

ՉՄԻՒՌՆԻԱ ԵԱԲԱԹ 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1878

ԹԻՒ 1102

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Քաղաքական աշխարհը, որ միշտ յղի է դեպ...

Անգլիայի տերութիւնը խիճայի պատերազմէն...

խօսի ձեռք հետ : Եւ յոյս կըցուցնէ թէ՛ բարե-

Սոյն նամակէն տասն օր յետոյ ուրիշ մի ևս...

Ետոյ սիր Նէվիլ Չէմպերլէյնն սամակ մի կը-

դող գունդի մի հետ, որք խայտարի կիրճէն...

Սոյն նամակներու հետեւանքն ուր յանգիլն...

անոր հաղորդակցութեան ու ազդեցութեան...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՊՐՈՑՆԵՐՈՒ ՎՐԱՅ

(Շարունակութիւն եւ վերջ : Տես գրիւ 1101 :)

պետ եղած են, ինչպէս և ուրիշներն ալ խմբա-

Ասոնք բոլորը ազէկ երայններ են՝ եթէ Աս-

Դիւրին է իրօք դասագիրք մը բանալ և ու-

անոր հաղորդակցութեան ու ազդեցութեան...

Իսկ մեք կրնամք շօշափելի փաստերով ցու-

Մեր դպրոցներուն մէջ աղայ մը օրինաւոր...

Ի հարկէ պատճառներ կան որ այս տեսակ...

յանցանքը վրայէն նետելու համար, բացատրութիւն տալ Անգլիոյ կառավարութեան զոր ծանուցագրով մի խնդրած էր անորմէ և ասաց՝ թէ քաղաքի էմիրին մօտ գետնային զրկելը պարզապէս քաղաքավարական նպատակաւ է. և ըստ ոմանց առաջարկել է էմիրին որ անոր երկրին մէջէն երկաթուղւոյ գիծ մի թողու անցնիլ:

Վերջին հեռագրական լուրերը պատերազմը մտաւրուտ կը համարին, և մինչև անգամ Հոկ. Յի (Ն. Տ.) հեռագիրը անգղիական նաւատորմին Պարսից ծոցը զրկուիլը կը ծանուցանէ: Արդէն Բէշապէրի քով 10,000 զօրաց բանակ մի գումարուած՝ առաջին նշանի կըստասն յարձակելու:

—Աժանս Հավաս Ս. Բէշապէրուրկէն ընդունելով կը հրատարակէ Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ հաստատուած հաշտութեան վճռական դաշնագրի կազմակերպութիւնը, համեմատ Այի Ստեփանոյի դաշնաց թղթի 29 յօդուածոյն. որոյ մէջ կ'ըսէ թէ՛ այսուհետև Ռուսիա և Թուրքիա սիրով պիտի մնան իրարու հետ ըստ դաշնաց Այի Ստեփանոյի, զոր աչքէ անցուց չափաւորեց և հաստատեց Բերլինի դաշնագիրը:

Թէ՛ կը ճանչնան Բերլինի դաշնագրին վաւերականութիւնը եւրոպական շահու խնդրոց նկատմամբ և կը պարտաւորին հաւատարմութեամբ և խղճիւ գործադրել:

Թէ՛ սոյն պայմանները որոնք ոչ եղծուեցան և ոչ չափաւորեցան, հաստատուն են և ունին զօրութիւն և արժէք՝ Բերլինու դաշնագրին մէջ անցածի պէս:

Ասոնք են այն պայմանները 300 միլիոն ռուբլի պատերազմական ծախսը, զեղելով Ռուսիոյ անցած երկիրներուն արժողութիւնը: 10 միլիոն ռուբլի ռուսահպատակաց առևտրոյն և Ռուս հաստատութեանց կրած վնասուց տուգանքը, 590,000 ֆրանք Գանուբի վերստին նաւարկելի ընելու համար պէտք եղած ծախսը և նաւարկութիւնը միջնատեղով մասնաւորաց ոմանց կրած վնասուց փոխարէնը: Ռուսիոյ թողուած երկիրներուն բնակիչները եթէ ուզեն գաղթել, կարենան իրենց անչարժ գոյքերը ծախել, որոյ համար երեք տարի պայմանաժամ չնորհուած է. յետ այնորիկ չգաղթողները ռուսահպատակ համարուին: Որչափ ժամանակ որ յիշալ երկիրները Ռուսաց ձեռք մնան, անոնց կառավարութիւնը բոլորովին ռուսական ըլլայ, առանց Թուրքիոյ միջամտութեանը. և ետ տրուելու

ժամանակ, օսմանեան զօրքերը երկրին մէջ չմտնեն՝ մինչև կանոնաւոր կերպիւ անոնց Բերլինի յանձնուիլը: Ռուսաց՝ Բուլղարիան, Արևելեան Ռումելիան և Ասիան պարպելու համար գործողութեան եղանակն ու պայմանը Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ պիտի սրոշուին համաձայնութեամբ ըստ Բերլինեան դաշնագրին: Բ. Գուռը կը պարտաւորի խառնութեամբ չվարուիլ պատերազմի ժամանակ Ռուսաց հետ յարաբերութիւն ունեցողներուն դէմ և չարգիլել ռուսական բանակին հետեւիլ ուղղող մարդիկը, և կատարել ներողութիւն չնորհել քաղաքական յանցանք բանտարկելոյ և արտօրելոյ:

Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ կնքուած և պատերազմի պատճառաւ առկա մնացած ռոշոր դաշնագիրը պայմանք և այլն, իրենց զօրութիւնն ունենան: Ռուսահպատակաց ի կախ մնացած և վէճի տակ եղած գործերը Բ. Գրան և դեսպալին որոշած դատաւորներու յանձնուին, վերջնապէս վճռելով զանոնք մաքրելու: Բ. Գուռը կը խոստանայ ռուսահպատակաց վնասներն՝ եթէ ըրած են հաստուցանելու, և վճիռները անմիջապէս ի գործ դնելու, թէ նորերը և թէ պատերազմէն առաջ վճռուած ու չգործադրուածները: Սոյն դաշնագիրը դեռ վաւերացեալ և կնքեալ չէ:

—Արևմտեան Թուրքիոյ քաղաքականութիւնը դեռ չհանդարտեցաւ: Աւագաժողովոյ որոշումներն կատարելապէս չգործադրուեցան և դեռ շատ կասկածներ կը վերցնեն: Արևելեան Ռումելիի Բուլղարը որոշած են արգելք լինել յիշեալ գաւառի կազմակերպութիւնը որոշող յանձնաժողովոյն, և կը պահանջեն Բուլղարիոյ հետ կցուիլ: Հեռագիրը կ'ըսէ թէ Սերվիացիք մեծ զօրութիւն իրենց սահմանադրոյն մօտ եղած Փոքր—Չլերնիքը մտեր և առանց դիմադրութեան գրաւել են Ռումանիա դեռ Պեսարապիոյ մասը Ռուսաց շանձնեց և դիւրութեամբ ալ յանձնելիք չունի: Յունական խնդիրը դեռ կանգուն կը կենայ և երկուստեք ցոյցերն աւելի պատերազմ կը դուռնակին քան թէ դիվանն ու խաղաղութիւն: Ռուսիան դեռ իւր ամբողջ զօրքերն քաշած չէ օսմանեան երկիրներէն և միշտ ստքերը քսելով կը քայլէ, գալանի խորհրդոյ մի կասկած թողով միշտ մեր մտաց մէջ: Գանի որ սոյն խնդիրները դեռ անլոյծ կը մնան, կրնամք համարձակ ըսել թէ՛ Բերլինեան ժողովոյ որոշումները դեռ կատարելապէս տեսական չըլլան:

շումները դեռ կատարելապէս տեսական չըլլան և դեռ չեն:

—Կ'իմանամք թէ Հոսարա փաշա Անգղիայէն վերադարձին վէհ. վիկտորիա Թադուհույն կողմէն նամակ մի բերած յանձնած է Յունաստանի թագաւորին. և նամակ մի ևս մեր վեհախառնայտեր, որոց յոյս կը ցուցնէ հելլենական խնդրոյն կարգադրութիւնը մօտերս խաղաղական ճամբով լծննայուն:

—Աւստրիոյ գործերն ևս յաջող են թէ Պոսնիոյ և թէ Հերսէքի մէջ: Պոսնա Յ նահանգի բաժնուեր է, և ամբողջ Աւստրիացոյ ձեռքը կը գտնուի. քաղաքային նոր օրէնք հաստատուել և սկսել է գործադրիլ:

Ուրախ սրտիւ կ'իմանամք թէ, զմեռնացի վեհ. Թադուր Պէյին Յակոբեան, Բարձր. Խոտիկ ձեռք ի կողմանէ վեհափառ Սուլթանին փաշայութեան աստիճանը չնորհուեր է: Բարձր. Փոխարքայն, որոյ առջև չնորհք դատած է Թադուր Պէյը, լաւ գիտնալով զարժանաւոր անձինքը վարձատրել, սոյն առթիւն մէջ այս օրինակ վարձատրութեամբ զյիշեալ Պէյը, մեր հանուգումը կը հաստատէ: Վասն որոյ Արշալուսոյ խըմբազրութիւնը կը իրութայ չնորհաւորել Թադուր փաշայի ընդունած բարձր տիտղոսը:

—Կայսերական հրամանաւ՝ Արևելեան Ռումելիոյ նահանգին ինքնօրէյ վարչութիւնը կազմուելու պաշտօն ունեցող միջազգային յանձնաժողովոյն առաջին անգամ անուանել է՝ Աւագ ժողովոյն նախագահ Ասիմ փաշան, և երկրորդ անգամ անուանել է մեծ Ս. Ապրո էֆէնտին, որ Բ. Գրան արտաքին գործոց պաշտօնատան խառն դատարուն վերապետու է:

Գարձեալ արտաքոյ կարգի պաշտօնով Պուքրէշ զրկուած Ազարիա էֆէնտին Օտէսայի օսմընդհանուր հիւպատոս, և Ստեփան էֆէնտին որ երբեմն Գանուբեան յանձնաժողովոյն քարտուղար էր, թայլանի օսմանեան հիւպատոս անուանել են:

—Մարից անուն Բուլղար լրագրին մէջ կը կարգացուի թէ՛ Ադրիանուպոլսոյ սանձախի ռոշոր ժողովուրդ թիթլըպէն զօրապետէն աղերսագրով խնդրած են որ յիշեալ գաւառը Բուլղարիոյ հետ կցուի: Սոյն աղերսագիրը 20,000 նաւելի ստորագրութիւն կը պարունակէ:

—Հեռագիրը բարեյաջող լուր կ'աւետէ մեզ ասիական Թուրքիոյ վերանորոգութեան մասին:

Ըն յառաջ կուգայ ըսինք, Այժմ, կարելի եղածին չափ այս տեղս պարզեմք զանոնք:

Նախ և առաջ մեր դպրոցաց մէջ արտմալի իրողութիւններէ մէկն է ճարտար կամ նախախնայական անուանեալ յարկին իբր յետին վայր նկատուելով՝ արժէք, խնամք և կարևորութիւն չբարոյնը: Ապաքէն այս յարկը իրեն կարևորութիւն չտրուելուն հակառակ կրնայ ըսուիլ թէ՛ ամբողջ Գրոց կոչուած հաստատութեան էական հիմն և աղբիւրն է: Ծաղկոցը՝ դպրոցի փորձաքարն ու հայելին է. այդ յարկին լաւութեանէն կամ յոռութեանէն միայն կրնայ հասկըցուիլ դպրոցի մի աղէկ կամ վատ ընթացքը: Այդ սուրբ յարկին մէջ աղբին դեռափոխիթ, քնքոյչ և անմեղ մանուկներն իրենց նախնական կրթութիւնը պիտի ստանան: Տղու մի համար իւր մօրը գիրկը որքան խանդաղատելի և փափուկ վայր է, և ծծած կաթն որքան անարատ, նոյնպէս ծաղկոցը պէտք է լինի անոր համար դպրոցի տեղ և ընդունած կրթութիւնը մաքուր, ուղիղ և անապական: Ծաղկոցը հոտաւէտ և գոյնզգոյն ծաղկերով լի պարտէզ մի է, բուրաստան մի, կամ աւելի ճիշտը խօսինք, անթեւ հրեշտակաց երկրային կայան մի. ուստի գիրկին է դուշակել թէ՛ այսպիսի անմեղութեան շուրթեալ վայր մի որքան մաքրակեաց, պատուաւոր, փորձառու, քաղցրաբարոյ, խոհեմ և երկարճօգի մարդոց կը կարօտի, որպէսզի ամեն ծաղիկ, ամեն բոյս, ամեն հրեշտակ անոնց սիրուն ու հայրաբոյրով հովանուոյն և բարուք խընամոց ու դաստիարակութեան ներքև մեծնալով, օր մի պտղատու և շքաւոր ծառեր դառնան: Ծաղկոցը, շատ անգամ իւր ընդ արժէքը

չճանչցուելուն համար այնպիսի անկիրթ, կոշտ և բարբարոս մարդոց ձեռք կանցնի, որոց կոխած տեղը խոտ չբուսնիր, և որոց ոչ թէ մանուկ մի յանձնել, այլ կատուի ձագ մի անգամ յանձնելը ներելի չէ: Գեռ անցեալ տարի, ցաւով կը յիշեմք, Մեսրոպեան վարժարանի ծաղկոցը այնպիսի անձի մը յանձնուած էր, որ և ոչ նաւակավար կամ բեռնակիր լինելու յատկութիւնն ունէր: Սոյն անձը խելքի կողմանէ աղքատ լինելէն զատ յետին ծայր ալ զեղծ ու կոշտ վարք ունէր. եթէ աղոց մէջ կային մարմնաւոր պակասութիւն ունեցողներ, զանոնք յիշելով կ'անուանէր «ձո կող», ձո կողը կոչելով. և մասաղաջ երեխայից սրտին մէջ ատելութիւն կը դրոյցնէր իւր ստեղծողին և բնութեան դէմ:

Կը հարցնեմք, ինչո՞ւ մեր դպրոցի աշակերտները մեծ մասամբ ստամբակ, կամապաշտ և անուղղայ կը մնան և հետզհետէ յոռի վիճակ կ'ունենան՝ բարոյապէս խօսելով՝ պատճառը յայտնի է: Վասնզի ծաղկոցին մէջ ի մանկութեանէ սոյն մատաղ հասակին մէջ բարի կամ վատ պատկերներու, տեսիլներու օրինակը խիստ գիրութեամբ կը տպաւորի կ'արմատանայ անոնց մատղաջ սրտերուն մէջ. այսպէս անբարոյական և անկիրթ դաստիարակաց աղբեղութեան ներքև մեծնալով և անոնց վարքն իրենց վրան անձնաւորելով, սոյն ողբալի վիճակին հասած է երեխայութիւնը: Ուստի կը կրկնեմք թէ մեր մտածելու առաջին և սրբազան կէտք ծաղկոցն է: Ինչպէս որ վարպետ և հոգածու պարտիզպան մի բոյսը, տունկը ու ծաղիկը սերմանելէ ետքը՝ անոր ճլելուն և ծաղկելուն համար ամեն տեսակ փոշերէ ու վայրի խոտերէ ազատ

կը պահէ, նոյնպէս և մեք մեր բոլոր ուշադրութիւնը ծաղկոցին վրայ դարձնել պէտք է մեք. զանկալ ամեն տեսակ վնասագար փոշերէ պէտք է ազատ պահեմք՝ եթէ կ'ուզեմք օր մի մեր աղայքը արդիւնաւոր և բարեշուք ծառեր լինին և ոչ թէ գօս, ճաղած ու վայրատուն:

Այսպիսի ինչ դպրոցին ծաղկոց ըսուած նախնական յարկին վերայ համառօտ մի խօսելէն յետոյ, գանք հիմա երկրորդական կամ երրորդական և այլ սրահաց մէջ ուսանողաց վերայ կառավարչութիւն ընող պաշտօնէին մասին խօսելու: Սեր դպրոցաց մէջ սովորաբար կտաւ վարչի պաշտօնը, որ ըստ մեզ, վարժապետական պաշտօնէն աւելի փափուկ զգուշալի և ծանր է, այնպիսի մարդոց ձեռք կը յանձնուի, որոնք դպրոց և վարժարան բառին բարոյական նշանակութիւնը անգիտանալէ զատ, դեռ իրենք կրթութեան և ուսման պէտք ունին:

Կան մեր մէջ միամիտ մարդիկներ, որոնք կարծեն թէ՛ կառավարչին պաշտօնը վարժապետին մէջ պարզ և գիրկին բան մի է, և անոր հսկողութիւնը միմիայն մեք ենայաբար աշակերտաց հանգարտ նստելուն և լուռ կենալուն վրայ կը կայանայ. ուստի այնչափ հոգ չէ՛ որ տգէտ Մարկոսը կամ անպիտան Սարգիսը կառավարիչ եղեր է: Սոյն կարծիքն աննեղելի տղիտութեանէ յառաջ կուգայ, որով ոչ նուազ վնասներ կրած են մեր դպրոցի ուսանողքը իսկ մեք կ'ըսեմք թէ՛ կառավարչին այնպիսի յատկութիւններ պարտի ունենալ, որ անհրաժեշտ են իւրեան համար, և դաստատուաց բացակայութեան միջոցին ամենաղբալի և անխուսափելի հարկաւորութիւն կը դառնան ուսանողաց նկատմամբ:

որոշ համար կ'ըսէ թէ՛ համաձայնութիւն գոյա-
ցեր է Լոնտոնայի և Կ. Պոլսոյ արքունեաց մէջ
հետեւեալ հիմանց վերայ :

1. Բ. Դուռը ասիական գաւառաց մէջ ոտի-
կանութիւն մի պիտի հաստատէ, որոյ կարգա-
դրութիւնը և հրամանատարութիւնը եւրոպաց-
ոց պիտի յանձնուի :

2. Քանի մի գլխաւոր քաղաքաց մէջ բողոքոյ
ատենաներ պիտի հաստատէ, որոնք իրաւասու-
թիւն պիտի ունենան ուրիշ քաղաքաց վերայ,
և ասոնց մէջ ևս եւրոպացի իրաւագէտ հիւպա-
տաներ պիտի գտնուին :

3. Բ. Դուռը պիտի անուանէ Եւրոպացի հա-
մարակալ (թէ՛ ֆլէթտար) մի պատասխանատու
բոլոր գաւառաց և կամտից, որ տասանորդ արոց
անդ հողային հարկի գրութիւնը պիտի ընդունի
վերջնայէս Լոնտոնայի արքունիքը կըցանկայ
որ վայիները (քրիստոնեայ) Բ. Դրան կողմէ
հինգ տարուան համար հաստատուին :

Սոյն կազմաւորութիւնը պաշտօնէից ժողովոյն
մէջ քննութեամբ ընդունուեցաւ, և վեհ. Սուլթա-
նին առաջարկուեցաւ վաւերացնելու :

Եղիպտոսի կառավարութիւնը համազգ պիտի
միջամտութեան շնորհիւ երթալով բարեկար-
գուելու վերայ է : Բարձր խափը որ իւր բոլոր
հողային կալուածոց եկամուտը կառավարու-
թեան գանձուն յանձնել էր, այս անգամ գան-
ձային դործերը վերակազմելու պաշտօնով հաս-
տատուած եւրոպական յանձնաժողովը բարձր
խափին համար տարեկան 100,000 ոսկի թողալ
մի յատկացուցած է : Նոյնպէս և նորա հորեղ-
բայր Հայկմիաշային 60,000 ոսկի որոշած է հա-
տուցանել մինչև 35 տարի, իւր հողային սեփա-
կանութիւնները նոյնպէս կառավարութեան
անցնելուն համար :

— Լրագիրք յիշատակած էին Հնդկի իշխանա-
նազուն իգ պալ իւր Տովլա անուն իշխանին մայ-
րաքաղաքն հասնելը, հեան ունելով Յական հողի
Հնդկ, Արաբ, Պարսիկ, Տաճիկ, Քիւրտ, Հրեայ
Քրիստոնեայ ազգացմէ : Ուղղակի Պաղտատէն
կողմէ ցամաքային ճանապարհաւ, և անդրիա-
կան դեպքանատան հիւր եղած է : Կ'ըսուի թէ
20,000 անդրիական ոսկի խոտացած է շնորհել
ի նպատակ գաղթականաց և վերադարձը զօրաց :
Սոյն իշխանը Առտի թագաւորութեան նախորդ
վահագետն է : արդէն մեկնած է մայրաքաղա-
քէն վառնայի ճանապարհաւ Բարիզ երթալու :

Նախ և առաջ կառավարչի մի բարոյականը
պէտք է անստղիւտ լինի և անբամբաս, և իւր
գործոց և վարմանց մէջ այնպիսի ուղղութիւն,
խոհմտութիւն և լըժութիւն : ունենայ, որսցմով
կարենայ աշակերտաց պատկառանք և յարգանք
ազգէլ խառն ընդ երկիւղի : Պէտք է ունենայ
գիտութեանն այլևայլ ճիւղերու քիչ շատ հըմ-
տութիւն և քանի մի օտար լեզուայ ծանօթու-
թիւն : որ սն յրաժեշտ է իրեն, որպէսզի երբ
դասարանէն դուրս ուսանողը իրեն զիմեն որ
և է խնդրոյ կամ առարկայի վերայ բացատրու-
թիւն խնդրելու, ունայնաձեռն ետ չբռնան, և
այսու շտապուելին իրենց դասը թերի թողուլ :
Նոյնպէս կառավարչի մի նուիրական պարտաւո-
րութիւնն է երբեմն աշխատութեան սրահին
մէջ, ուր աշակերտք խմբովին կըհաւաքուին,
բարոյական դասեր խօսիլ, յորդորներ տալ և
զուսանողս ազգի ազգի հոգեշահ առաջներով և
բարի վարուց մէջ յառաջագիմելու համար քա-
ղաքերէ, և մինչև իսկ դանոնք միջման մղել :
Չմոռնանք բուրն թէ՛ կառավարչին պէտք է
նաև քրիստոնէական ուսման մէջ զարգացեալ
լինի, բարեպաշտ ողբով և ջերմեանդ սրախ
առ իւր ազգային կրօնը, և հետեւագէտ պէտք
է աշակերտաց հոգւոյն մէջ ևս կրօնական զգա-
ցումը միշտ վառ պահել, որով կըբերանայ
զանոնք բարոյականութեան մէջ ևս զարգացը-
նելու միջոցը, այս բանիս մեծ օգուտ և խթան
կըլինի կառավարչին անձնական օրինակը և առ-
կըղեցին և քահանայոց ցոյց առած իւր համա-
կրթութիւնն ու յարգանքը :

Մեր վարժարանները, կըկրկնեմք, երկար
աւարիներ յոռի տեսութեան ներքև ճնշեալ,

ուր պիտի մնայ ամիս մի անկէ ի Լոնտոն անց-
նելով՝ հինգ ամիս ևս հոն պիտի բնակի և կրկին
վերադառնայ ի Կ. Պոլիս՝ Պաղտատ երթալու :
Կըսուի թէ յիշեալ իշխանը օրը 250 ոսկի եկա-
մուտ ունի, բաց ի 50 ոսկիէն զոր Անգղիոյ տե-
րութենէ կընդունի օրական :

— Վեհ. Սուլթանը իւր բարձրագոյն հաճու-
թեան նոր ապացոյց մի տուաւ բարձրագատիւ
Եպարգոսին : Թէ՛ Նորին Բարձրութեան և թէ՛
վեհմ. Բէֆէթ—Պէյլի ազնուաշուք տիկինները
իւր պալատը կոչելով, պատիւ ունեցան Նորին
Վեհափառութեան ներկայանալու, որ բարեհա-
ճեցաւ շնորհել անոնց պատուանշաններ զոր մօ-
տերս հաստատած է տիկնաց համար :

— Արտահանի հրամանատար Հիւսէյն Սապրի
փաշան մարտական ատենի առջև գատապար-
տեալ և աստիճանազուրկ լինելով, Սինոպ զըր-
կուեցաւ 3 տարի բանտարկեալ մնալու պատժով :

— Լարնաքայի (Կիպրոս) անդրիական կառա-
վարութիւնը Աթենայի թղթաբեր շոգենաւն
արգիւր է Կիպրոս հանդիպելու :

— Կիրիտէն լուր կուտան թէ՛ բարձր Միտ-
հաթ փաշան յիշեալ կղզին հասեր և մեծ պատ-
ուով ընդունուել է տեղական իշխանութիւն-
ներէն և ժողովրդէն :

Վեհափառ Սուլթանը իւր քարտուղար Նազըլ
Պէյլին հետ 500 ասպ. զրկած է Միտհաթ փաշայի
կնոջ՝ ճանապարհի ծախուց համար, որ պատ-
րաստուած էր իւր ամուսնոյն քով երթալու :

— Բուսանիոյ Կարդոս իշխանը Արքայական
բարձրութեան տիտղոսն ստացաւ, և ըստ այնմ
ճանչուեցաւ Աւստրիոյ Իտալիոյ և Անգղիոյ
տէրութիւններէն :

Հետեւեալ նամակը ի սէր ճշմարտութեան կը-
ստիպուիմք լրագրիս միջոցաւ հրատարակել,
կէտագրութեամբ անցնելով մի քանի տեղերը :
... խմբագիր

Հետաքրքիր ընթերցողք տեսած են անշուշտ
Ա. Մանլը Օգոստոսի թուոյն մէջ պատասխան
մը վերնագրով նամակաձև յօդուածք : Մամլոյ
պատուելին այս անգամ ալ տիրացու աշակերտի
մը վահանին ետեւէն վախն ի վախ կ'արձակէ իր
թունախի նետերը, առանց սակայն կարենալու
վերադարձը զօք, անգծելի ժայռերու հանդի-
պելով : ...

Տիրացուի մը անունին տակ պահուելով մեզ
այնքան դարմանք չազդեր . գիտեմք արդէն որ

տղայոց մեծագոյն մասը փոխանակ գալոցէն
չահուելու՝ վնասուեցան տեսակ տեսակ մոլու-
թիւններ ստանալով : Մեր շատ անգամ խօսե-
ցածը նորէն կըկրկնեմք, թէ գալոցներն ազգին
ամենէն նուիրական և սրբազան յարկերն են,
թէ՛ գալոցները պէտք են արժանաւոր, բանի-
բուն և պատուաւոր կառավարիչներ ունենան,
թէ՛ գալոցները հակառակութեան քսութեան
ցած վրիժառութեան և շահախնդրութեան
տեղի չեն : Թէ՛ անոնք բոլորովին իրենց բուն
նշանակութիւնը կըկորսնցընեն՝ երբ անկարող,
իմաստակ և անբարի վարուց կողմանէ ծանու-
ցեալ մարդիկ որ և է նկատուեցնելով կ'ընդուն-
ուին գալոցին մէջ՝ միմիայն զանոնք ապրեցը-
նելու համար : Քանիցս անգամ ըսեր եմք թէ՛
ազգին զաւակները կրթելը, անոնց մտաւորա-
կան սնունդը պատշաճ կերպիւ հոգալը, կար-
ծուածին չափ դիւրին բան չէ : ուստի անխտիր
առանց արժանիք նայելու ընդունուած կա-
ռավարիչ կամ դաստուռ, գալոցաց պատուոյն
արատ կըբերէ և պաշտօնին սուրբ անուը կը-
պղծէ :

Գալոցի մէջ արժանաւոր կառավարչի պակ-
սութեանէն ծագած չարեաց և բարոյական վնաս-
ուց վրայ խօսելէ յետոյ, գանք հիմա խօսիլ
վարժապետաց և անոնց արժէքին, անկերպա-
րան վիճակին և տխուր կացութեան վերայ :

Վարժապետութեան ազնիւ և սուրբ պաշտօ-
նը մեր մէջ հետզհետէ ստորին, անպատիւ և
տխուր կացութեան մէջ կըգտնուի այսօր . վասն
զի մեք այդ մասին հարկ եղած յարգանքը,
պատկառանքը և արժէքը տուած չունիմք, և
տան սպասաւորի մի ինչ աչքով որ կընայիմք,

նա իր կրից դերի ըլլալով, մինչև անգամ օրորո-
ցի մանուկին կըբիմէ հասարակաց գատապար-
տութենէ խոյս տալու համար : Փոյթ չէ, կըբաւէ
որ ճշմարտութիւնը կըխոստովանի : Ա. Մամլոյ
պատուելին կ'ըսէ թէ՛ քանի որ գալոցները
իր օրով անբարոյական վայրէ դարձած էին, պէտք
չէր ուրեմն որ ծնողք իրենց զաւակները հոն
զրկէին : Այս խօսքով իր օրով գալոցներն ինչ
վիճակի մէջ ըլլալը խոստովանելէն յետոյ, գործ-
քով ևս ցոյց կուտայ ծաղկոցին մէջ անբարոյա-
կան մանկավարժի վատ աղբեցութեանէն աղա-
տելու համար իւր մատաղահասակ որդին բողո-
քականի գալոցը զրկելով : Ամեն ծնողք չէին
կրնար իրեն օրինակին հետեւել, մեծ մասամբ
գրամական միջոցէ զօրկ ըլլալով, այլ միայն
կըբողքէին անլսելի ձայնով գալոցի անկար-
գութեան դէմ : ... Պատուելին ժողովրդեան
արգարացի բողոքները ծուռ մեկնելով, այսօր
կ'եղնէ կ'ըսէ թէ՛ քանի որ գալոցները անբա-
րոյական վայրեր են (իր օրով), թող ծնողք ի-
րենց զաւակները հոն չզրկեն : Այս խօսքը պի-
տի կարենար խօսիլ Մամլոյ պատուելին, հասա-
բակութեան կըթողուէր պատասխանել : ...
Եղած բարոյական զեղծմանց ցուցակ մը ունիմք
քովիւրիս, զոր պատրաստ եմք շոչախելի փաս-
տերով հաստատելը և կ'ուզէ, միայն սա պայ-
մանաւ : ...

Մամլոյ խմբագիրը մէկ քանի վարժապետաց
մեղքը կըմտնէ, իւր թէ հասարակութեան մէջ
խմբակի մը արձագանք կըլինին, և նստած ե-
լած տեղերին գալոցները կըբամբասեն : Այդ-
չեմք յուսար, և եթէ ստոյգ է, թերևս իրենց
խօսէն բռնադատեալ մի քանի ճշմարտութիւն-
ներ յայտնած են : Գուցէ այս ըլլայ պատճառ-
ներկայ Տեսչին վարժապետաց դասուն վերայ
խստութիւն բանեցնելը, և չներելը մինչև ան-
գամ քահանայից հետ սերտ յարաբերութիւն
ունենալ :

Չեմք գիտեր դարձեալ, թէ սոյն գալոցա-
կան խմբոյն հետ ինչ վերաբերութիւն ունի
Քիւրտի հայասէր քահանային Հայոց վրայ շի-
նած գրքին թարգմանութիւնը, զոր առանց
ամբողջ կարգալու հեղեարար կըբատախետէ,
ինչպէս և ուրիշ անգամ մի ևս Յովսէփայ դե-
ղեցիկ պատմութիւնը վար կըզարնէր, թերևս
գրաբառ ըլլալուն համար : Ինչու չբաղդատէր
սոյն երկու հատընտիր աշխատասիրութիւնները
իւր վիպասանական թարգմանութեանց հետ,

նոյն աչքով կընայիմք նաև վարժապետին : Այս
պատճառաւ ստորին կարգի տղէտ և անկիրթ
մարդիկ են այժմ (բացառութիւնը չմոռնալով),
այդ պաշտօնին հետամուտները, և այդ նուիր-
ական և վարժապետական այժուին վերայ
բաղվելու յանդգնողները : Սակայն մտածող
չկայ թէ՛ այս կարգի ուսուցչաց ձեռք յանձ-
նուելով մեր երեսայքը, իրենց թանկաղին
ժամանակը յուճկետս կ'անցընեն, և չեն կրնար
բան մի ուսնիլ ինչպէս որ պէտք է :

Եւրոպայի մէջ ամենէն յարգելի, ամենէն
բարձր և ամենէն պատկառելի ու պատուաւոր
քաղաքային վարժապետն է, և այս անուանակո-
չութիւնը նորա պատիւը և շուքը կ'աւելցընէ
ինչ ժամանակ որ մէկու մի բերնէն լսուի : Եւ-
րոպացին գիտէ որ ազգաց շուսաւորութիւնը,
յառաջագիմելութիւնը, գիտութեանց մէջ օր
աւուր զարգացումը, դաստիարակաց ջանքով
կըկատարուի : Յայտնի է որ մեք այս կարգի
վարժապետներ չունիմք, ունենալու համար իսկ
դեռ շատ դարեր պիտի անցնին : Տաճկաստանի
մէջ մեր ամենէն գիտուն կարծածնիս սիրամար-
գի փետուրներով զարդարուած աղաւա մի է,
և շատ անգամ այնպիսի տարօրինակ և վնասա-
կար սկզբունքներ կըյայտնէ, որ ամենատղէտ
և անխելահաս մարդոյն անգամ արհամարհանքն
ու զայրոյթը կըզրդուէ : Ուրեմն պէտք չեմք
այնպիսի արտաքին շարժումներով զարդարուած
վարժապետներու և գիտուններու խաբուիլ : Որ
և է մէկը Լոզան երթալով և տարի մի հոն թա-
փառելով գիտուն չկրնար լինիլ, անոր շահած-
ները բոլորովին տեսական և առերեւոյթ բաներ
են . անոր գրութիւնը խախուտ և կաղ է և չի-

որոցմով անբարոյականութեան սերմեր տարածեց ազգին մէջ . կ'իմանայ, կըլսէ՞ արդեօք ընտանեկան յարկերու մէջ կատարուած ցաւալի դէպքերը, որ կը պատահին շնորհիւ իւր թարգմանութեանց : կը տեսնէ՞ արդեօք թէ իւր Աստուծոյ ճշմարտութեան սրբան վնասներ հասուցած և ազգին աճումը նուազեցուցած են . թող անգամ մը ակնաչնեքը դէպ ի ընտանեկան յարկերը երկնցքէ ու լսէ՞ դժբաղդ ծնողաց անէծքները զոր կը թափեն յիշեալ վիպասանութեանց թէ հեղինակներուն և թէ աւելի թարգմանիչներուն դէմ : . . . Այսքան մը առայժմ բաւական կը համարուի մեր ինքնապարծ կոչուող գրագէտին, ինչպէս կ'անուանէ զինքը, և թող ներքէ եթէ չեմք ընդունիլ իւր արդարաւորութեան և հմտութեանը, քանի որ իր աշխատութիւններն և հմտութիւնները այսքան չարիք կը հասցունեն հասարակութեան և ազգին մանկանց բարեօրդ գաստիարակութեան :

Իզմիր, 23 Սեպտեմբեր 1878

Ազգային լրագրաց ծանօթութեանց կարգին մէջ կարգաւորով նորատիպ գրքի մի հրատարակութիւնը, այն է Պատմ. հին կտակարանի տըպեալ յերուսաղէմ, ծախելք զմիւսնացի Սարգիս աղա Աղասեանի ի յիշատակ հօր իւրոյ Նուպարայ և Ստեփանի հօր ամուսնոյ իւրոյ Սրբուհի տիկնոջ Արապեանի, փափաքեցանք մի օրինակ ձեռք ձգել . զոր և ուշադրութեամբ աչքէ անցնելով, մեր ունի աւելի գրաւորն եղաւ նորա յառաջաբանը, որ բուն իսկ գրքին չափ կարեւորութիւն ունի իւր ողջախոհութեամբն և բարոյական ճշմարտութեամբն, այն է գաստիարակութեան, կամ որ նոյն է բարոյական ուսման հիմն դնել կրօնական ուսումը : Սոյն անհերքելի ճշմարտութիւնը քաղաքիս Ս. Մեսրոպեան գաղտնի նախորդ տեսչութեան քանի մի աշակերտք չկարենալով կամ չուզելով բժիշկանել, թերեւ մեք խօսեցած լինելուս համար սոյն ճշմարտութեան վերայ, արժան կը համարուիք ամբողջ յառաջաբանը մէջ բերել և խնդրել յիշեալ գաղտնի թէ վաղեմի և թէ արդի աշակերտներէն որ ուշադրութեամբ կարդան և հետեւապէս կրօնէ գուրս բարոյական չորոնեն . և նորա ուսուցածք բաւական համարին իրենց բարոյականն ևս ուղղելու :

Ահաւասիկ Յառաջաբանը, գաստիարակութեան շինուածքը եթէ կրօն

կրնար գործադրուիլ մինչև որ Լոզանի ժողովուրդը աստ և կամ իզմիրու ժողովուրդը անդ՝ ի Լոզան չփոխադրուի : Աստի մեք մեր վարժարանները մեր ժողովրդեան պահանջմանց և հանգամանաց և բնական երկրին գրից և ընդունակութեանց համեմատ վարել պէտք եմք, որպէսզի Լաֆոնթէնի առակը մեր վերայ չգործադրուի : միսը թողով՝ ստուերին չհետեւիք : Մեք եթէ իրենց կոչմանն արժանի վարժապետներ չունիմք, գոնէ աշխատիմք այդ պաշտօնին, բիշ շատ յարմար ու կարող անձինք ընտրել, բաւական է որ փորձեալ լինին, և ոչ թէ չուկայի փողոցներէն ժողովմք տգէտ ու անբարոյական անձինքներ և անոնց ձեռք յանձնելք մեր ծաղկոցները և դպրոցները, որոց վերայ է մեր ապագայ յոյսը : Սակաւաթիւ լինին վարժապետք, այլ արժանաւոր, այնպիսիներ որ իրենց սուրբ և փափուկ պաշտօնին տեղեակ լինին . այնպիսիներ որ կարող լինին ազգին մանկապետք իմացականապէս և բարոյապէս կրթելու թէ անոնց միտքն և թէ սիրտերը մշակելով : Մեր վարժապետաց մեծագոյն մասը վարձկաններ են և ամսոց վերջերը միայն կը լիտեն . իրենց կարծեաց մէջ տկար, սկզբանց մէջ յողգողք, ընթացից մէջ անհետեւ և չահու համար այլոց քծնող ու գերի եղող : Այսպիսի են մեծ մասամբ մեր ծաղկոցաց և նախակրթարանաց մանկավարժները, որոնք չահուելու համար ընտրուած են քան թէ մատաղ մանկաւոյն օրինաւոր գաստիարակութիւն տալու :

Թ. ԲԱՐԵՆԵԱՆ

նական ուսման վրայ չհիմնուի, անկարող է ընձեռել մարդկային ընկերականութեան այն օգուաները, որոնք ընդհանրապէս գաստիարակութեան կ'ակնկալուին : Ինչպէս մարդը երկու որոշ մասերէ բաղկացած է, այն է ի հոգւոյ և ի մարմնոյ, նոյնպէս և գաստիարակութիւնը իւր վախճանին նկատմամբ կրկին է . մին կ'ասուի մասաւոր գաստիարակութիւն և միւսն բարոյական : Մտաւոր գաստիարակութեան օժանդակ միջոցներն են արտաքին գիտութիւնները, որք մարդոյ մտաւոր կարողութեանց զարգացման կը ծառայեն . իսկ բարոյական գաստիարակութեան միակ օժանդակն է կրօնական ուսումը, որ յաւէտ մարդոյ սիրտն և հոգին կը լրէնէ : Ինչ անհամեմատ տաւալութիւնն որ ունի հոգին մարմնէն, նոյն տաւալութիւնն ունի բարոյական գաստիարակութիւնը մտաւոր գաստիարակութեանէն . առաջինը մարդոյ սիրտը կը լրէնէ, կը հմայէ և կը կապէ այն գերագոյն էակին հետ, որ աղբիւր է կատարեալ երջանկութեան և փառաց : Թուիլ կուտայ մարդոյ հոգւոյն, որով կը վերապանայ այն բարձր գաւառները, ուր տիւն է աներեկ, լոյսն է անստուեր, և կեանքն է անթաւամ : Ուրեմն որ ուսումն այնքան կարեւոր և անհրաժեշտ կարող է լինել կրօնի ուսումէն առաւել, որ արարածը Արարչի ծանօթութեան կ'առաջնորդէ, կ'ուսուցանէ մարդոյն Աստուծոյ հետ ունեցած կապակցութիւնները, կ'ուսուցանէ այնպիսի փրկարար ճշմարտութիւններ, առանց որոյ անհասարկութիւն վերջապէս կ'ուսուցանէ այն պատգամները և պատուէրները, որոց կատարումն անհրաժեշտ է մարդ—արարածոյն ի լինել հաճոյ Աստուծոյ, և երջանիկ կրկին կենաց մէջ :

Բայց որովհետեւ ամեն կրօնական ուսմանց հիմն Հին կտակարանն է, որով Աստուած իւր կամքը և ողորմութիւնը կտակած է բովանդակ մարդկութեան . ուրեմն իրաւամբ կարող եմք ասել որ Հին կտակարանի պատմութիւնը գաստիարակութեան մէջ վերելութեան առաջին աստիճանն է : Աւելորդ կը համարուիք ընդարձակորէն խօսիլ սոյն ուսման օգտակարութեան և կարեւորութեան վերայ, վասն զի ուրախ եմք, որ մեր մէջ եթէ ոչ կատարելապէս, դէմ մասամբ զգալի եղած է սոյն ուսման կարեւորութիւնը և մեծ յոյս ունիմք, որ օրըստօրէ առաւել զգալի պիտի լինի շնորհիւ ազգ. կրօնական ժողովոյ . որոյ առաջին և նուիրական պարտաւորութիւնն է կրօնական ուսումը ազգին մէջ ծաւալելու և արմատացնելու միջոցները խորհիլ և գիւրացնելու և այլն :

ԱԶԳԱՅԻՆ

Ազգային լրագրաց շինուածքը կարեւոր տեղեկութիւնք : Պօլսոյ ազգային վարչութիւնը գաղութակաւորութեանց վերայ կը տաղանայի առանց կարենալու բան մի գործել . և այսուհետեւ պէտք ալ չպիտի լինի այդ մասին ազգային ժողովները զբաղեցնելու, եթէ ստոյգ է Ասիոյ վերանորոգման համար Անդղիոյ և Բ. Դրան մէջ համամութիւն գոյանալը :

—Ուրախ սրտիւ կ'իմանամք ամե. խրիմեան Ս. Հայրեկին տուած քարոզները . բայց ըստ մեր կարծեաց այդքանը բաւական չէ . Պօլսոյ Հայերը պէտք չունին այն քարոզներուն . Հայաստանի ճնշեալ Հայոց պէտք է լսել ընել : Պէտք է խրիմեան Հայրեկին Ամիենի քահանային Պետրոս ճգնաւորի նման ընէ . նա խաջն ուսն առած այնպէս սկիզբն սուաւ խաշակութեան . նա պտըտեց Եւրոպոյ շատ քաղաքները, ժողովուրդը վառեց, ոչ իրենց համարին եղբարք բարբարոսաց ձեռքէն ազատելու, այլ քրիստոնէութիւնը : խրիմեանի պաշտօնը քան զՊետրոսինը մեծ կը լինէր՝ քրիստոնէութեան հետ մէկտեղ իւր արիւնակից եղբարքը, իւր հայրենիքը, իւր հարց նուիրական վայրերը պիտի աղատէ : Ժամանակ է գործելու :

ՔԱՆՈՒՔԱՆ ԵՆԻՔԵՐ

Զմիռնիա, 30 Սեպտեմբեր

Քաղաքիս հիւպատոսք համախորհուրդ լինելով ծանուցագիր մի ուղղեցին մայրաքաղաքը իրենց գեւապաններուն . պարունակութիւնը յայտնի չէ : կը թուի թէ տեղոյն ուստիական տեսչութեան անբաւականութեանը կը վերաբերե-

րի, որոյ պատճառաւ քաղաքիս անհատական ապահովութիւնը իսպառ բարձուած է . և բարեկարգելու մասին խորհուրդ կը լինի հիւպատոսայ և բարձր կուսակալ Համոնի փաշային մէջ : Յաջողութեանը համար կը բարեմաղթեմք :

Որոշուած էր արդէն ուստիականութեան շարժուն զօրաց խումբ մի հաստատել, որ գաւառիս մէջ գործուած եղեւնադորձութեանց անմիջապէս վերայ հասնելով առաջն առնուի : Դրժբարդաբար Եստիմ—Պէյր որ հրամանատար է գաւառային ուստիականութեան զօրաց, հիւանդանալով առայժմ ետ մնաց :

Քաղաքիս մէջ ոճրագործութիւնք կը շարունակին անարգել : Անցեալ շաբթու Թորոֆ կուսուած փողոցին մէջ համեստ երիտասարդ մի երկու գողերու կը հանգիստի, որոց դէմ դնել ուղեւորականի երկու հարուած կ'ընդունի ուսին և ճակտին : Դարձեալ նոյն տեղ երկու յոյն բնկերք կուսելով իրարու հետ, մէկը կը զարնուի մերձ ի մահ և երկու օր յետոյ կը մեռնի :

—Տաճիկ երիտասարդ մի կարգացողներու կարգէ, Պայրամի երկրորդ օրը Չիլիէն ի Մէնէմէն երթալուն՝ ճանապարհին երկու Տաճիկ կը հանգիստի, որոց մին արար էր . ձիէն վար կ'առնեն, ձեռքերը կրկապեն ու գրպանները պարպէն յետոյ դէպ ի իզմիր կը գառնան, թողլով խեղճը սպանդանոցի կողմ նման կապած, որուն ճաճորդ մի հանգիստելով կ'ազատէ իւր կապերէն : Մի քանի աւուր յետոյ իզմիրու մէջ գողերէն միոյն հանգիստելով չուկային մէջ բռնել կուտայ ու կը բանտարկուի, անչուտ քանի մի օրէն ելնելու պայմանաւ՝ որ իւր արձեատը կրկին շարունակէ :

—Եվեստի մէջ արար կին մի երեք զաւակ մէկէն կը ընի, մին ճերմակ, ևրիւսը սև . թէ զաւակները և թէ մայրը առողջ վիճակի մէջ են :

—Ամսոյս 23ին երկրորդ դէպք մի պատահեցաւ Այսթնու երկաթուղոյն վերայ, միւսնոյն տեղը, ուր գծէն գուրս ելնելով, 2 ուղտապանք մեռան և ուրիշ շատեր վիրաւորեցան :

—Բերայի մէջ կամաւոր զօրաց խմբէն Հայ մի մէկ ֆիւրտ զարկեր սպաններ և երեք ալ վիրաւորեր է, բայց փախչելու պահուն բռնուեր է :—Փոխարինութիւն համարուիք զայս անհուն արիւնհեղութեանց Հայոց :

—Պրմանիոյ թագաւորին որդին իւր հօր տեղ գահակալեր է :

—Ապօտամբապետ Ղօզանօղլու Ահմէտ փաշայի համար վերջին հասած լրագիր մի ձերբակալ լինելը կը ծանուցանէ :

Վ Ր Ի Պ Ա Կ

Երրորդ երեսի՝ երկրորդ սինակի 20րդ տողի շփեալ և հանդիպելու բառերը չափիւ և հանդիպելու է :

—Արշալուսոյ 1100 թուոյն Լնտոնէն հասած նամակին իններորդ տողի անձնագիր բառը ունկնդիր պէտք էր լինի, զոր կը ծանուցանեմք ըստ ինդրոյ նամակագրին :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Աֆիւն. մեծ հանգարտութեան մէջ է : Այս շաբթուս մէկ կողով միայն Գորահիսարի նոր ապրանքէն ծախուեցաւ 125 դահեկան չէքին : իսկ անցեալ շաբթու վաճառեցան 48 կողով զանազան տեսակ, 121—127 դահեկան : Պատրաստի կան չուկայի մէջ 3167 կողով :

ԿԵՆՈՒՅՈՒՄ

Մի քանի անգամ է «Յ. Պոնոնքեան խմբագիր Արշալուսոյ» հասցեով տուժարուր կը ստանամք . որ մեյ՛ ամար ոչ միայն զարմանք՝ այլև գաղտնիք մի կըրուի, չգիտնալով բուն պատճառը ինքնակող ե ինքնաճան խմբագրի մի այս օրինակ փառախորբեան, որ կը կիրտի Արշալուսոյ վահանին ներքէ պատիւ ստանալ : Ուստի կը փութամք ծանուցանել ընդհանուր ազգին որ նամակ յուղարկել ուղղոր կընայ պարզապէս «Ա. խմբագրութիւն Արշալուսոյ» հասցեով ուղղել :

Խմբագիր—տէր լրագրոյս, Պ. Կ. Գ. Պալտաշարեան :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՄԱՆԱԿԱՆ ԱՐԱՐԱՆՆԵՐ